Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վ. Մարտիրոսյանի գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

  Վահան Մարտիրոսյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Շվեյցարիայի Համադաշնություն (ք. Ժնև), 2017թ. դեկտեմբերի 18-22-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

  Շվեյցարիայի Համադաշնության նախագահ Դորիս Լոյթհարդ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

Մասնակցություն Միացյալ Ազգերի Կազմակերպության Ինտերնետային Կառավարման համաժողովին

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2017 թվականի դեկտեմբերի 18-ից-22-ը ք. Ժնևում կայացել է ՄԱԿ ինտերնետային կառավարման համաժողովի տասներկուերորդ ամենամյա հանդիպումը, որի հիմնական նպատակն էր տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը ներկայացնող բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակում անցկացնել քննարկումներ թվային կառավարման, թվայնացման, կայուն թվային ապագայի կառուցման և այլ թեմաներով:

Համաժողովի շրջանակներում քննարկվել են կիբեռանվտանգության ոլորտի համընդհանուր չափանիշների աճող դերի, տնտեսական հատվածի թվային պառակտման հասարակական կարծիքի, հասարակական վստահության և ժողովրդավարության վրա թվայնացման ազդեցության վերաբերյալ հարցեր:

Համաժողովին իրենց մասնակցությունն են ցուցաբերել աշխարհի տարբեր երկրներից ժամանած պաշտոնյաներ, որոնք ներկայացրել են իրենց ազգային փորձը և առաջադեմ թվային փոխակերպման բնագավառի լավագույն պրակտիկան:

Քննարկումների ընթացքում ընդգծվել են գործընկերության, ներդրումների և զարգացման հիմնական միտումները, որոնք կարող են լինել միջազգային հանրության հետ համագործակցության ընթացքում:

Համաժողովի շրջանակներում քննարկվել են նաև.

- համացանցի դարաշրջանում Թվային նույնականացման կառավարման մարտահրավերները, որը մարտահրավերներ է նետում անհատներին, կազմակերպություններին, կառավարություններին և այդ համատեքստում առաջարկվող լուծումները՝ միմյանց հետ անվտանգ շփումներ ապահովելու համար,
- լավագույն կառավարումը որպես Թվային էկոհամակարգում վստահության և կիբեռանվտանգության կառուցման համար մասնագիտական չափանիշ,
- պետական համակարգի գործընթացի կառուցման համար համացանցի գնահատման դերը,
- ինչպես է թվային գործունեությունը ձևավորում համացանցի հետագա զարգացումը,
- Թվային տնտեսությունում և հասարակությունում համագործակցությանն ուղղված բաց երկխոսություն,
- ինտերնետային կառավարման համաժողովի համատեքստում համագործակցության ամրապնդումը:
- 2018թ-ի աշխատանքների ծրագիրը:

- **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

Համաժողովի շրջանակներում Վահան Մարտիրոսյանը հանդիպումներ է ունեցել տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես նաև ՏՀՏ ոլորտը ներկայացնող հայտնի կազմակերպությունների ղեկավարների հետ, այդ թվում՝ Հեռահաղորդակցության միջազգային միության գլխավոր քարտուղար Հոուլին Ժաոյի հետ:

Հանդիպման ընթացքում կողմերը բարձր են գնահատել Հայաստանի և ՀՄՄ-ի միջև ձևավորված համագործակցությունը և հույս հայտնել, որ առաջիկայում այն ավելի կընդլայնվի:

Նախարարը կարևորել է որպես ՀՄՄ անդամ-պետություն Հայաստանի առավել ակտիվ ներգրավվածությունը միության աշխատանքներին, մասնավորապես, բարձր մակարդակի մասնակցությունը առաջիկայում նախատեսվող միջոցառումներին:

Հանդիպմանը քննարկվել են նաև ոլորտի զարգացման հիմնախնդիրներին ու մարտահրավերներին առնչվող հարցեր:

Այցի շրջանակներում Վահան Մարտիրոսյանը հանդիպում է ունեցել նաև «ICANN» (Գրանցված անվանումների և համարների ինտերնետ կորպորացիա) նախագահ Յորան Մարբինի հետ, որի արդյունքում ստորագրվել է «ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և Գրանցված անվանումների և համարների ինտերնետ կորպորացիայի միջև փոխըմբռնման հուշագիր»:

Հուշագրի նպատակն է ամրապնդել հարաբերությունները ՀՀ տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարության և «ICANN»-ի միջև, խթանել ինտերնետ դոմենի էկոհամակարգի զարգացումը և դոմենների օգտագործումը Հայաստանում, բարձրացնել «ICANN»-ի առաքելության մասին իրազեկվածության մակարդակը և հայկական շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը «ICANN»-ի գործունեությունում:

Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել շարունակել համագործակցությունը դոմեն անվանումների զարգացման ոլորտում, աջակցել միջազգային դոմենների օգտագործմանը և խթանել ինտերնետ կառավարման բազմաշահառու մոդելը:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
  տեխնոլոգիաների նախարար
  Վահան Մարտիրոսյան
  22.12.2017թ.